

U¹¹
1604

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՀԱՄՄԱԴ ԱԼԻ ՆԱԶԱՐԻ

ՄԻԿՈՐԻԶԱՅԻ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՈՒ
ԵՎ ՑՈՐԵՆԱՇՈՐԱՅԻ ԱՃԻ ԵՎ ՄՆԵԴԱՌՈՒԹՅԱՆ ՎՐԱ
ՋՐԻ ԵՎ ՑԻՆԿԻ ԱՆԲԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

2.01.01 – «Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, ագրոքիմիա»
մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

МОХАММАД АЛИ НАЗАРИ

ВЛИЯНИЕ КОЛОНИЗАЦИИ МИКОРИЗЫ НА РОСТ
И ПИТАНИЕ ЯЧМЕНЯ И ТРИТИКАЛЕ В УСЛОВИЯХ
ДЕФИЦИТА ВОДЫ И ЦИНКА

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата
сельскохозяйственных наук по специальности
06.01.01 – “Общее земледелие, почвоведение, агрохимия”

ЕРЕВАН – 2016

hmf 146

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ս.Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռ.Ռ. Մանուկյան

գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հ.Ս. Մարտիրոսյան

Առաջատար կազմակերպություն՝

«Հ ԳՆ Երկրագործության գիտական կենտրոն»

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. հուլիսի 6-ին ժամը 12:00-ին ՀՀ ազգային ագրարային համալսարանում գործող 011 (Ագրոնոմիա) մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փող. 74 (1 մասնաշենք, 425 լսարան): Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀԱԱՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. հունիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու՝

Ս.Ս.Հարությունյան **Գ.Վ.Ավագյան**

Тема диссертации утверждена на ученом совете Государственного аграрного университета Армении.

Научный руководитель:

доктор сельскохозяйственных наук, профессор

С.С.Арутюнян

Официальные опоненты:

доктор сельскохозяйственных наук, профессор

Р.Р.Манукян

кандидат сельскохозяйственных наук, доцент

Գ.Ս.Մարտիրոսյան

Ведущая организация:

Научный центр земледелия МСХ РА

Защита диссертации состоится 6-го июля 2016г. в 12⁰⁰ часов на заседании специализированного совета 011 Национального аграрного университета Армении, по адресу: 0009, г.Ереван, ул. Теряна 74 (1 корпус, аудитория 425).

С диссертацией можно ознакомиться в библиотеке НАУА.

Автореферат разослан 1-го июня 2016г.

Ученый секретарь специализированного совета, кандидат сельскохозяйственных наук

Ս.Ս.Հարությունյան **Գ.Վ.Ավագյան**



11-1609

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Չորային և կիսաչորային տարածաշրջաններում հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացման և կայունացման ամենակարևոր բնական գործոններից մեկն այն է, որ այդ միաշաքիլավոր բուսատեսակները միկորիզային սնկերի հետ առաջացնում են ակտիվ սիմբիոտիկ կապ, որը կարող է բույսերի կողմից օգտագործվել որպես ուժեղ պատնեշ անբարենպաստ կլիմայական գործոնների դեմ: Ներկա ժամանակներում մարդու գյուղատնտեսական գործունեության ընթացքում միանգամայն հնարավոր է դարձել բնական երևույթների և գործընթացների անթրոպոգեն կառավարումն ու դրանց խթանումն ավելի բարձր արդյունքի հասնելու համար: Այս նպատակով առաջին անգամ փորձ է արվում ԻԻՀ Լորեստանի նահանգի կիսաչորային հողերում մշակվող գարու և ցորենաշորայի ցանքերում կիրառել միկորիզային սնկերի տարբեր շտամների խտանյութեր, որոնք, միանալով այդ սնկերի բնական պաշարներին, կարող են զգալիորեն թեթևացնել բույսերի վիճակը աճի, զարգացման և հասունացման բոլոր փուլերում: Բույսերի հետ միկորիզային սնկերի բիոցենոտիկ կապերի կենսատեխնոլոգիայի օգտագործումը միաժամանակ ազդեցությունների կայունության և պարենային անվտանգության բարձրացման լուրջ հեռանկարներից մեկն է, քանզի այն հիմնված է բնության մեջ միլիոնավոր տարիների ընթացքում հաստատված բնական ընտրության և սիներգիզմի վրա:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Իրանի Իսլամական Հանրապետությունում մշակվում է 1,85 մլն հա գարի, որից 1,1 մլն հա-ը՝ անջրդի պայմաններում (12 ց/հա բերքատվությամբ) և 0,75 մլն հա-ը՝ ոռոգվող (32 ց/հա միջին բերքատվությամբ): Ցորենաշորայի ցանքատարածքները երկրում կազմում են ընդամենը 75000 հա բացառապես ոռոգման պայմաններում (45 ց/հա միջին բերքատվությամբ): Լորեստանի մարզում մշակվող գարու ցանքերի (մոտ 170000 հա) մեծ մասը (165000 հա) անջրդի է և հեկտարից ապահովում է 19,0ց, իսկ ցորենաշորան (12000 հա) մշակվում է միայն ոռոգման պայմաններում՝ ապահովելով 30 ց/հա բերք:

Հաշվի առնելով ցորենաշորայի ցանքատարածքների ընդարձակման հնարավորությունները չորային և կիսաչորային հողատարածքներում և անջրդի պայմաններում մշակվող գարու ցածր բերքատվությունը, ուսումնասիրությունները նպատակ են հետապնդել ակտիվացնել այդ մշակաբույսերի հետ միկորիզային սնկերի տարբեր շտամների բնական սիմբիոտիկ կապը՝ սերմերի ցանքի հետ միաժամանակ օգտագործելով դրանց գործարանային խտանյութը: Կիրառվող կենսատեխնոլոգիայի հետ միասին պահպանվել են հողի մշակության ագրոտեխնիկական միջոցառումները և բույսերին տրվող անհրաժեշտ պարարտանյութերի քանակը: Դաշտային և վեգետացիոն փորձերի շրջանակներում ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները.

- հողերի ագրոքիմիական բնութագրի ցուցանիշները,

- բույսերի կենսամետրիկ չափումների ցուցանիշները (բարձրությունը, վեր-գետնյա և արմատային զանգվածի կշիռները)՝ կախված միկորիզային շտամներից,
- գարու և ցորենաշորայի տերևներում պրոլինի, քլորոֆիլի և հարաբերական խոնավության ցուցանիշներն ըստ տարբերակների,
- գարու և ցորենաշորայի ռիզոսֆերայում միկորիզային սնկերի փորձարկված շտամների բնակեցման աստիճանը,
- ուսումնասիրվող մշակաբույսերի հատիկի և ծղոտի հաշվառում և այդ կենսազանգվածներում հիմնական սննդատարրերի և միկրոտարրերի պարունակության որոշում,
- հատիկի և ծղոտի բերքի կողմից ազոտի, P₂O₅-ի, K₂O-ի, Fe-ի, Zn-ի, Mn-ի և Cu-ի օտարման չափերի հաշվառում,
- փորձարկված միկորիզային սնկերի առանձին շտամների և նրանց չափաքանակների տնտեսական արդյունավետության հաշվարկ:

Գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Իրանի հողային ռեսուրսների (51 մլն հա) մեծ մասը չի մշակվում սակավ տեղումների և չորային կլիմայի պատճառով, և գյուղատնտեսական նշանակություն ունեն ընդամենը 18,5 մլն հեկտարը, որոնց մի մասը մի մասը նույնպես գտնվում է չորային և կիսաչորային գոտիներում: Ոռոգման ջրերի սակավության պատճառով այդպիսի տարածքներում ավանդական ագրոմիջոցառումներն արդեն չեն բավարարում գոնե միջին բերք ստանալու համար, ուստի խիստ կարևորություն են ձեռք բերում նոր տեխնոլոգիաների և առաջին հերթին կենսատեխնոլոգիաների կիրառումը խոնավության դեֆիցիտը մեղմացնելու և բույսերի աճն ապահովելու համար:

Գարու և ցորենաշորայի ցանքերում վեգիկուլար-արբուսկուլար միկորիզային սնկերի խտանյութերի ցանքակից օգտագործումը կենսատեխնոլոգիական նոր միջոցառում է, որը հնարավորություն է տալիս չորային և կիսաչորային հողատարածքներում մեղմելու խոնավության սթրեսը և ավելացնելու բույսին անհրաժեշտ ջրային պաշարները: Ջրային սթրեսի հաղթահարման հետ միասին ուժեղանում է նաև մակրո- և միկրոտարրերի կլանումը բույսերի կողմից: Միկորիզայի երևույթի լայնամասշտաբ կիրառումը Իրանի և հարակից երկրների չորային տարածքներում գործնականում կարող է ունենալ ոչ միայն զգալի տնտեսական արդյունավետություն, այլ առաջին հերթին կենսաբանա-էկոլոգիական մեծ նշանակություն կունենա էկոհամակարգերի կայունության բարձրացման գործում, ինչպես նաև կլիմայի կարգավորման գործընթացներում:

Աշխատանքի վավերացումը: Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել են 2010-2012թթ. ՀՊԱՀ-ի ագրոէկոլոգիայի ամբիոնի նիստում, Իրանի «Հողի և ջրի գիտահետազոտական ինստիտուտում»: 2013թ. (Թեհրան): Աշխատանքի հիմնական արդյունքներն ամփոփված են 6 գիտական հոդվածներում:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 146 համակարգչային էջի վրա, բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, որն ընդգրկում է 198 աղբյուր: Ատենախոսությունում ներառված են 36 աղյուսակ, 7 գծապատկեր, 8 նկար և 2 քարտեզ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԼՈՐԵՍԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համառոտ ներկայացվում է ուսումնասիրվող նահանգի, ինչպես նաև նրա վարչական տարածքի մեջ մտնող Քուիդաշտի շրջանի (որտեղ կատարվել են դաշտային փորձերը) աշխարհագրական դիրքը և կլիման, ջրային և հողային ռեսուրսների բնութագիրը, մշակվող և բնական բուսատեսակները: Լորեստանի նահանգը զբաղեցնում է Իրանի տարածքի մոտ 1,7%-ը (28157 կմ²), որի 75%-ից ավելին լեռներ և բլուրներ են:

Քուիդաշտի շրջանն ընկած է տիպիկ կիսաանապատային գոտում և ունի դրան բնորոշ կլիմա, որտեղ բացասական ջերմաստիճաններ գրեթե չեն լինում: Տեղումների գումարային քանակը տարիների կտրվածքում տատանվում է 237-ից մինչև 508մմ, առավելագույն միջին ջերմաստիճանը՝ 42°C: Նահանգում կա 23 գետ, որոնցից ամենակարևորներն են Կաշկանը, Սեզարը, Բախտիարին և Սիմերին, իսկ տարեկան ջրային մուտքը կազմում է 20 մլրդ մ³, որի մոտ 94%-ը գուրջիանում և արտահոսում է տարածքից: Քուիդաշտի շրջանում հիմնականում տարածված են կիսաանապատային հողերը, որտեղ աճեցվում են խաղող, պտուղ, հացահատիկային և բանջարային մշակաբույսեր, շաքարի ճակնդեղ և այլն:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1 Դաշտային և վեգետացիոն փորձերի պայմանները, սխեման և օբյեկտները

Ուսումնասիրությունները կատարվել են 2008-2011 թթ., ընդ որում դաշտային փորձերը՝ Լորեստանի մարզի Քուիդաշտի շրջանում (2009-2011թթ.), իսկ վեգետացիոն փորձը՝ Թեհրանի համալսարանի փորձարարական բազայում 10կգ տարողությամբ վեգետացիոն անոթներում (2008-2009թթ.): Ուսումնասիրության օբյեկտները եղել են գարու Իզեհ, իսկ ցորենաշորայի՝ Ջուանիլո 92 սորտերը (երկուսն էլ աշնանացան են):

Մսկային խտանյութերը, որոնք արտադրվում են Իրանի «Հողի և ջրի գիտահետազոտական ինստիտուտում», օգտագործվել են ցանքի ժամանակ: Մսկային պատվաստանյութը (խտանյութեր) իրենից ներկայացնում է սնկերի որոշակի թվով սպորներ (70սպոր±10սպոր) 10 գ ավազի և կավի խառնուրդում, որը հող է մտցվում սերմից 3-4 սմ ավելի խորը: Մշակաբույսերի սերմի ցանքը կատարվել է դեկտեմբերի առաջին տասնօրյակում, որից հետո դաշտերը երկու անգամ ջրվել են մինչև անձրևների սկսվելը, այնուհետև

մինչև վեգետացիայի վերջը չեն ջրվել: Գարու բերքը հավաքվել է հունիսի սկզբին, իսկ ցորենաշորայինը՝ հուլիսի սկզբին: Սերմերը նախապես ախտահանվել են Carboxin thiram-ի 0,2% ջրային լուծույթով:

Վեգետացիոն անոթներում սերմերի հետ միասին օգտագործվել է նաև 90 մգ ցինկի սուլֆատ: Դաշտային փորձերում որպես ֆոն վարի տակ է մտցվել ֆիզիկական կշռով 75 կգ ամոնիումի սուլֆատ, 50 կգ կալիումի սուլֆատ, 100 կգ կարբամիդ և 25 կգ ցինկի սուլֆատ մեկ հեկտարի հաշվով: Դաշտային (սխեման՝ աղյուսակ 1, 2, 3-ում) փորձերը կատարվել են 4 կրկնողությամբ, որոնցից յուրաքանչյուրը կազմել է 6x1,2մ մակերես: Վեգետացիոն փորձը նոյնպես դրվել է 11 տարբերակներով 50 և 100 գ/անոթ խտանյութերի չափաքանակներով:

2.2 Դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունների մեթոդները

Վեգետացիոն և դաշտային փորձերը հիմնելուց առաջ կատարվել է փորձադաշտի հողի նմուշառում 0-30սմ շերտից (մոտ 10 կետերից), որի հողը օգտագործվել է նաև վեգետացիոն անոթների համար: Հողի նմուշառումը և լաբորատոր անալիզները կատարվել են Իրանում ընդունված մեթոդներով: Ընդհանուր ազոտը որոշվել է Կյելլայի, օրգանական ածխածինը՝ կալիումի բիքրոմատով օքսիդացման և մորու աղով տիտրման մեթոդներով: Մատչելի ֆոսֆորը որոշվել է 0,5M-ոց NaHCO₃-ի լուծույթով էքստրակցիայով, այնուհետև չափվել ֆոտոէլեկտրակալորիմետրով, կալիումն անջատվել է ամոնիումի ացետատով, այնուհետև որոշվել բոցային ֆոտոմետրով: Օրգանական ածխածնի ցուցանիշը բազմապատկելով 1,724 գործակցով ստացել ենք հումուսի քանակը: Միկրոտարրերի (Fe, Cu, Zn, Mn) պարունակությունը հողում և բուսական նմուշներում որոշվել է 0,005 դիէթիլենտրիամինպենտաքացախաթթվի (DTPA) + 0,01M CaCl₂+0,1M տրիէթանոլամինի (TEA) լուծույթով (pH - 7,3) էքստրակցիայով, որից հետո Perkin Elmer 3030 ատոմային-աբսորբցիոն սպեկտրոմետրով: Հողում դաշտային սահմանային խոնավունակությունը որոշվել է հատուկ ճնշման (33KPa)՝ Ռիչարդսի մամլիչի միջոցով:

Բույսերի մեջ ազոտը, ֆոսֆորը և կալիումը որոշվել են համապատասխանաբար Կյելլայի մեթոդով, էլեկտրակալորիմետրի և բոցային ֆոտոմետրի միջոցով: Պրոլինի քանակը որոշվել է բույսերի թուլացած ու կախված տերևներում Բիտերի մեթոդով, քլորոֆիլի պարունակությունը՝ SPAD-502 սարքի միջոցով:

Բույսի տերևներում ջրի հարաբերական պարունակությունը որոշվել է Bars և Wesley-ի բանաձևով՝

$RWC = \frac{W_{fresh} - W_{dried}}{W_{dried}} \times 100$

Միկրոիզոպիտ սնկերով բույսերի արմատային համակարգի գաղութացման աստիճանը որոշվել է հետևյալ բանաձևով՝

Ստացված տվյալները մաթեմատիկական վերլուծության են ենթարկվել ANOVA համակարգով, SAS ծրագրի միջոցով և արդյունքները համեմատվել են Դունկանի թեստի արժեքների հետ:

2.3 Վեգետացիոն և դաշտային փորձերի հողի ազրոքիմիական բնութագիրը

Լորեստանի նահանգի վարելահողերի զգալի մասը պատկանում է կիսասանապատային գորշ տիպին, որոնց առաջացման գործընթացում մեծ դեր է խաղում չորային կլիման: Ընդարձակ հարթություններում այս հողերի պրոֆիլում ցայտուն կերպով առանձնանում են գենետիկական հորիզոնները:

Քուհաշտի շրջանի փորձադաշտերի հողն ունի բաց գորշ գույն և կավային կազմ (ֆիզիկական կազմը հասնում է 71%): Հարուստ է կարբոնատներով (53.5%), որը բույսերի աճին խանգարող գործոն չի հանդիսանում: Հումուսի պարունակությունը վարելաշերտում կազմում է 1,05%, աղքատ են մատչելի սննդատարրերով: Նշված հողերն ունեն ցածր բերրիություն, սակայն դրանք վաղեմի մշակվող հողեր են, որտեղից քիչ բերք են ստացել: Ժամանակակից տեխնոլոգիաների և ակտիվ ցանքաշրջանառության պահպանման ժամանակ հնարավոր է զգալիորեն բարձրացնել այդ հողերի արտադրական պոտենցիալը և բույսերի բերքատվությունը:

ԳԼՈՒԽ 3. ՎԵՋԻԿՈՒԼԱՐ-ԱՐԲՈՒՍԿՈՒԼԱՐ ՄԻԿՐՈԻԶԱՅԻՆ ՍԼԿԵՐԻ ԴԵՐԸ ՏԵՐ ԲՈՒՅՍԻ ՀԵՏ ՍԻՄԲԻՈՏԻԿ ԿԱՊԵՐՈՒՄ (գրականության ակնարկ)

Գլխի 4 ենթաբաժիններում բավականին հանգամանորեն ներկայացված և լուսաբանված են գիտական գրականության տարբեր աղբյուրներ, որոնք վերաբերում են միկրոիզոպիտ սնկերի արդյունավետությանը սննդատարրերի կլանման, բույսերի աճի և բերքատվության գործում, տեր բույսին ջրով մատակարարելու գործընթացում, ինչպես նաև միկրոիզոպիտ սիմբիոզի դերը չորային տարածաշրջաններում և հողերում: Կարևոր անդրադարձ է կատարված վեգիկուլար-արբուսկուլար միկրոիզոպիտ սնկերի վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 4. ՄԻԿՐՈԻԶԱՅԻՆ ՍԼԿԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՍԱԶՈՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՎՈՂ ԳԱՐՈՒ ԵՎ ՑՈՐԵՆԱՇՈՐԱՅԻ ՑԱՆՔԵՐՈՒՄ

4.1 Միկրոիզոպիտ սնկային պատվաստանյութի կիրառման արդյունավետությունը գարու վեգետացիոն փորձում

Միկրոիզոպիտ սնկերի տարբեր շտամների պատվաստանյութի նախնական փորձարկումը մեր կողմից կատարվել է վեգետացիոն փորձում: Փորձն իրականացվել է միայն գարու վրա 2008-2009 թթ. և հիմնական

նպատակը բույսի արմատային համակարգում փորձարկված սնկերի գաղութացման աստիճանի որոշումն էր, սակայն դրա հետ միասին ուսումնասիրվել են մի շարք տարբեր ցուցանիշներ: Բույսերի բարձրությունը տարբերակների շրջանակներում տատանվել է 66-70 սմ-ի սահմաններում, իսկ միկորիզային սնկերի տարբեր շտամների ազդեցությունը այս ցուցանիշի վրա աննշան է՝ 0,1-4սմ: Սնկային շտամների խտանյութերը թույլ ազդեցություն են ունեցել նաև բույսերի կենսազանգվածի վրա, իսկ քլորոֆիլի պարունակությունը տերևներում ավելացրել է 1-2%-ի չափով: Ստուգիչի հետ համեմատած (9,5%) բույսի ռիզոսֆերայում միկորիզային սնկերի բնակեցման աստիճանը մոտ 250%-ով ավելացել է խտանյութերի տարբերակներում: Այսինքն, բնական միկորիզան կարելի է ավելի արդյունավետ դարձնել սնկերի արտադրական խտանյութերի օգտագործման պայմաններում: Այդ արդյունավետությունն ավելի բարձր է լինում, երբ հողին է խառնվում մի քանի շտամների խտանյութեր:

Ընդհանուր ազդուի պարունակությունը գարու կենսազանգվածում տարբերակների շրջանակներում տատանվում է 1,97 - 2,80%-ի, P₂O₅-ը՝ 0,21-0,42, իսկ K₂O-ն՝ 1,35-1,91%-ի սահմաններում, ընդ որում սնկերի տարբեր շտամներ ստուգիչի համեմատ զգալիորեն ավելացրել են հիմնական սննդատարրերի պարունակությունը: Նույն երևույթը տեղի ունի նաև միկրոտարրերի յուրացման պրոցեսում, այսինքն սնկերի տարբերակներում համատարած բարձրանում է Fe-ի, Zn-ի և Cu-ի պարունակությունը, իսկ Mn-ի կուտակումն առանձին տարբերակներում ստուգիչի հետ համեմատած նույնիսկ նվազում է, որն ըստ երևույթին բացատրվում է սնկերի նյութափոխանակային գործընթացներում այդ տարրի խաղացած դերով: Վեգետացիոն փորձում կատարված ուսումնասիրությունները հաստատում են, որ սնկային խտանյութի չափաքանակի ավելացման դեպքում դրանց արդյունավետությունն ավելի է բարձրանում:

Դաշտային փորձերի արդյունքները

4.2 Միկորիզային սնկերի տարբեր շտամների ազդեցությունը գարու և ցորենաշորայի աճի և բերքատվության ցուցանիշների վրա

Չորային և կիսաչորային կլիմայական պայմաններում հացահատիկային մշակաբույսերի ընդհանուր կենսազանգվածը զգալիորեն նվազում է, իսկ վեգետացիան՝ կրճատվում: Լորեստանի նահանգի Քուիդաշտի շրջանում հացահատիկային մշակաբույսերի վրա խոնավության անբավարարությունը նկատելի է դառնում ապրիլ ամսից, իսկ առանձին տարիներին՝ նաև մարտից, երբ բույսերը սկսում են խողովակակալվել: Այդ երևույթն առաջին հերթին ազդում է բույսերի բարձրության վրա (աղյուսակ 1): Աղյուսակի տվյալներից երևում է, որ գարու բույսերի 3 տարվա միջին բարձրությունը տարբերակների շրջանակներում կազմել է 68,6սմ-ից (ստուգիչ) մինչև 80,4սմ (*Glomus mosseae* - 20q/մ² խտանյութ), մնացած տարբերակներում՝ 71-78սմ սահմաններում:

Աղյուսակ 1

Միկորիզային սնկերի տարբեր շտամների ազդեցությունը գարու և ցորենաշորայի աճի, կենսազանգվածի և բերքի վրա (3 տարվա՝ 2009-2011 թթ միջինը)

Տարբերակները	Գարի			Ցորենաշորա					
	Բույսի գանգվածը, գ/բույս (օդային)	1000 հատիկի կշիռը, գ		Բույսի գանգվածը, գ/բույս (օդային)	1000 հատիկի կշիռը, գ				
		վեր-գետնյա գանգված	արմատ		վեր-գետնյա գանգված	արմատ			
1. Ստանդ սնկերի (ստուգիչ)	68,6 d	3,31	1,03	80,7 b	4,22	1,61	33,8	2178 e	3217 b
2. <i>Glomus mosseae</i> - 10q/մ ²	78,3 ab	4,21	1,50	84,2 a	4,77	1,82	35,3	2601 a	4044 a
3. <i>Glomus mosseae</i> - 20q/մ ²	80,4 a	4,29	1,56	84,4 a	4,66	1,77	35,4	2573 ab	4033 a
4. <i>Glomus intraradices</i> - 10q/մ ²	77,4 abc	4,03	1,38	83,8 a	4,75	1,81	34,3	2444 bcd	3843 ab
5. <i>Glomus intraradices</i> - 20q/մ ²	76,6 abc	4,13	1,42	83,9 a	4,70	1,79	34,4	2423 bcd	3806 ab
6. <i>Glomus etunicatum</i> - 10q/մ ²	74,6 abcd	3,97	1,34	83,5 a	4,53	1,76	34,7	2360 d	3698 ab
7. <i>Glomus etunicatum</i> - 20q/մ ²	75,8 abcd	3,89	1,46	83,5 a	4,46	1,75	34,6	2388 cd	3746 ab
8. <i>Glomus caledonium</i> - 10q/մ	72,0 bcd	3,71	1,22	82,6 ab	4,59	1,74	35,0	2542 abc	3989 a
9. <i>Glomus caledonium</i> - 20q/մ ²	70,8 cd	3,61	1,18	82,6 ab	4,61	1,68	35,1	2519 abc	3946 a
10. Սնկերի 4 շտամների խառնուրդ - 10-ական q/մ ²	73,9 abcd	3,83	1,30	82,2 ab	4,52	1,72	34,8	2493 abcd	3918 a
11. Սնկերի 4 շտամների խառնուրդ - 20-ական q/մ ²	72,8 bcd	3,77	1,26	83,0 a	4,65	1,72	34,9	2469 abcd	3880 ab

Յորենաշորայի բույսերի բարձրությունը մոտ 10-12 սմ-ով ավելի բարձր է եղել գարու բույսերից և տարբերակների սահմաններում կազմել է 80,7-84,4 սմ, այսինքն ուսումնասիրվող միկորիզային սնկերի ազդեցությունն այս մշակաբույսի աճի վրա ավելի թույլ է եղել:

Գարու և ցորենաշորայի հատիկների հասունացման փուլում ուսումնասիրվել է բույսերի վերգետնյա և արմատային զանգվածները կշռային մեթոդով: Աղյուսակ 1-ից երևում է, որ գարու վերգետնյա զանգվածը ստուգիչում կազմել է 3,31, իսկ արմատային զանգվածը՝ 1,03 օդաչոր վիճակում: Սնկային խտանյութերի տարբերակներում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է՝ 3,61-4,29 և 1,18-1,56գ/բույս օդաչոր վիճակում: Յորենաշորայի մոտ նկատվել է գրեթե նույն օրինաչափությունը՝ կենսազանգվածի որոշ գերազանցումով:

Կարևոր ցուցանիշ է համարվում 1000 հատիկի կշիռը, որն անմիջակա նորեն կապված է բերքատվության ցուցանիշի հետ: Դաշտային փորձերում ստացված տվյալների համաձայն (աղյուսակ 1) գարու 1000 հատիկի 3 տարվա միջին կշիռը ստուգիչում կազմել է 28,6 գ, իսկ նպատակային տարբերակներում՝ 29,3-31,8գ, ցորենաշորայի փորձի ստուգիչում այն կազմել է 33,8; իսկ սնկային խտանյութերի տարբերակներում՝ 34,3-35,4 գ, այսինքն միկորիզային սնկային խտանյութերը գարու 1000 հատիկի կշիռն ավելացրել են 2,4-11%-ով, իսկ ցորենաշորայի մոտ՝ 1,5-4,7%-ով:

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ գարու հատիկի երեք տարվա միջին բերքը ստուգիչում կազմել է 2375, իսկ նպատակային տարբերակներում՝ 2474-2874 կգ/հա: Ծղոտի զանգվածը համապատասխանաբար կազմել է 2724 և 2825-3287 կգ/հա: Յորենաշորայի մոտ հատիկի բերքը ստուգիչում կազմել է 2178, իսկ ծղոտինը՝ 3217 կգ/հա: Սնկային խտանյութերի տարբերակներում հատիկի բերքը տատանվել է 2360-2601, իսկ ծղոտինը՝ 3698 - 4044 կգ/հա սահմաններում: Պետք է նշել, որ ուսումնասիրվող մշակաբույսերի առավելագույն ապրանքային և ոչ ապրանքային բերքն արձանագրվել է *Glomus mosseae*, իսկ նվազագույնը՝ *Glomus etunicatum* խտանյութերի տարբերակներում: Այդ օրինաչափությունը նկատվում է նաև աղյուսակում բերված մյուս ցուցանիշների վրա, այսինքն Լորեստանի կիսաչորային և չորային հողատարածքներում միկորիզային սնկային խտանյութերի օգտագործումը հնացահատիկային մշակաբույսերի ցանքերում կենսաբանաէկոլոգիական տեսակետից ունի կարևոր նշանակություն, թեպետ ագրոնոմիական արդյունավետությունը համեմատաբար ցածր է:

4.3 Միկորիզային սնկերի ազդեցությունը գարու և ցորենաշորայի չորադիմացկունությունը բնութագրող մի քանի ցուցանիշների վրա

Վեգետացիայի ընթացքում դեպի բույսի տարբեր օրգաններ ջրի հոսքի թուլացման դեպքում նվազում է ֆոտոսինթեզի ինտենսիվությունը և կրճատվում բերքը: Այս տեսանկյունից կարևոր ցուցանիշ է համարվում բույսի տերև-

ներում ջրի հարաբերական պարունակության գնահատումը, որը բացահայտում է վեգետացիայի տվյալ փուլում տերևի մեջ եղած ջրի քանակը, իսկ դա կախված է թե՛ հողում եղած խոնավության քանակից, և թե՛ օդի ջերմաստիճանից ու հարաբերական խոնավությունից: Այդ ուսումնասիրություններն իրականացվել են գարու և ցորենաշորայի հասկերի կազմավորման փուլում, երբ ջրի հոսքը դեպի վերգետնյա օրգաններ առավել վճռական նշանակություն է ստանում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ գարու և ցորենաշորայի ցանքերում միկորիզային սնկերի բոլոր շտամներն որոշակի դրական ազդեցություն են ունեցել բույսի տերևներում ջրի հարաբերական պարունակության վրա: Եթե ստուգիչում արձանագրվել է 73-75%, ապա նպատակային տարբերակներում այն տատանվել է 75-79%-ի սահմաններում, այսինքն սնկային խտանյութերը 2-4%-ով բարձրացրել են ջրի պարունակությունը տերևներում՝ դրանով իսկ որոշ չափով խթանելով ֆոտոսինթեզի ինտենսիվությունը: Ուսումնասիրված սնկերի շտամներից բույսերի տերևներում ջրի հարաբերական պարունակության վրա ավելի դրական ազդեցություն են ունեցել *Glomus mosseae* և *Glomus caledonium* շտամները: Սնկային խտանյութերի տարբերակներում 1-3մգ-ով ավելացել է նաև քլորոֆիլի պարունակությունը ստուգիչի նկատմամբ:

Չորության դեմ բույսերի դիմազրավման կարևոր կենսաբանական և էկոլոգիական ցուցանիշներից մեկը պրոլինի քանակի ավելացումն է տերևներում: Պրոլինի ամենաբարձր քանակությունը եղել է ստուգիչ տարբերակում (40 և 39,5 մկգ/գ), իսկ միկորիզային սնկերի տարբերակներում երկու մշակաբույսերի մոտ էլ 1-2 մկգ-ով ավելի քիչ է եղել ստուգիչի հետ համեմատ: Այս փաստը վկայում է այն մասին, որ միկորիզային սնկերն իրենց սիմբիոտիկ կապով տեր բույսին կարողանում են ապահովել ջրով, այսինքն տերևներում ջրի հարաբերական պարունակության բարձրացումը նվազեցնում է պրոլինի պարունակությունը:

Միկորիզային սնկային խտանյութերի կիրառման ամենակարևոր ցուցանիշը տեր բույսի արմատների հետ սիմբիոտիկ կապի որոշումն է, այլ կերպ սնկերի բնակեցման կամ ռիզոսֆերայի զարգացման աստիճանի բացահայտումը (աղյուսակ 2): Աղյուսակի տվյալներից երևում է, որ գարու արմատների վրա բնական միկորիզային սնկերի բնակեցման աստիճանը (ստուգիչ) կազմել է 17,9; իսկ ցորենաշորայի մոտ՝ 20,1%, իսկ միկորիզային սնկերի խտանյութերի օգտագործման դեպքում ավելացել է 3-10%-ով: Փաստորեն, հողում զարգացող բնական միկորիզային սնկերի բնակեցման աստիճանը կարելի է զգալիորեն բարձրացնել այդ սնկերի տարբեր շտամների արհեստական խտանյութերի միջոցով:

Միկորիզային սնկերի տարբեր շտամների ազդեցությունը գարու և ցորենաշորայի հորաղիմացկունությունը բնութագրող մի քանի ցուցանիշների վրա (3 տարվա 2009-2011 թթ միջինը)

Տարրերակները	Թարմ տերևի կշռի հաշվով						Սնկերի բնակեցման աստիճանը բույսի ռիզոմիջևում, %	
	Ջրի հարաբերական պարունակությունը, %		Պրոլինի պարունակությունը, մկգ/գ		Քլորոֆիլի պարունակությունը, մգ/գ		գարի	ցորենաշորա
	գարի	ցորենաշորա	գարի	ցորենաշորա	գարի	ցորենաշորա		
1. Մտանց սնկերի (ստուգիչ)	72,6 b	74,5 b	40,0 a	39,5 a	33,7 c	33,8 d	17,9 d	20,1 d
2. <i>Glomus mosseae</i> – 10գ/մ ²	76,5 a	78,1 a	39,2 a	38,1 a	36,4 a	35,7 abc	24,6 abc	28,7 ab
3. <i>Glomus mosseae</i> – 20գ/մ ²	76,3 a	78,0 a	37,4 a	37,9 a	36,6 a	35,9 abc	28,2 a	26,9 abc
4. <i>Glomus intraradices</i> – 10գ/մ ²	75,5 a	77,8 a	38,5 a	38,1 a	35,3 abc	36,7 a	21,7 bcd	26,9 abc
5. <i>Glomus intraradices</i> – 20գ/մ ²	76,1 a	77,4 a	38,7 a	38,2 a	36,0 ab	36,3 abc	23,9 abc	26,3 abc
6. <i>Glomus etunicatum</i> – 10գ/մ ²	75,3 a	77,5 a	39,3 a	38,2 a	35,6 ab	36,4 ab	21,1 cd	28,1 abc
7. <i>Glomus etunicatum</i> – 20գ/մ ²	75,8 a	77,0 a	37,9 a	38,3 a	35,8 ab	35,3 bc	23,3 abc	29,2 a
8. <i>Glomus caledonium</i> – 10գ/մ ²	76,9 a	78,4 a	37,7 a	37,6 a	35,0 abc	35,1 bc	26,4 ab	25,0 bc
9. <i>Glomus caledonium</i> – 20գ/մ ²	76,4 a	78,5 a	37,2 a	37,7 a	34,8 abc	36,1 abc	22,3 bcd	24,4 c
10. Սնկերի 4 շտամների խառնուրդ – 10-ական գ/մ ²	75,4 a	76,9 a	38,9 a	38,4 a	34,4 bc	35,6 abc	25,8 abc	25,8 abc
11. Սնկերի 4 շտամների խառնուրդ – 20-ական գ/մ ²	75,1 ab	77,3 a	38,2 a	38,4 a	35,2 abc	34,9 cd	25,4 abc	29,9 a

4.4 Միկորիզային սնկերի դերը գարու և ցորենաշորայի բույսերի կողմից մակրո- և միկրոսննդատարրերի կլանման գործընթացներում և դրանց արտադրական օտարման չափերը

Ազոտէկոհամակարգերում մշակաբույսերի երաշխավորված բարձր և որակյալ բերք ստանալու կարևոր պայմաններից մեկը բույսերին հանքային սննդատարրերով ավաիովելու անհրաժեշտությունն է: Բույսերի հանքային սննդատության ինտենսիվությունն անմիջականորեն կապված է հողի խոնավության և ջերմային ռեսուրսների, ինչպես նաև այլ բնական գործոնների հետ: Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ գարու հատիկում ազոտի պարունակությունը ստուգիչում կազմել է 3,25; իսկ սնկային խտանյութերի տարբերակներում փոքր ինչ ավելացել է՝ 3,26-3,42%: Նույն օրինաչափությունը պահպանվել է նաև ծղոտում (1,27% ստուգիչ և 1,28-1,35%՝ նպատակային տարբերակներ): Ցորենաշորայի հատիկում ազոտի պարունակությունը ստուգիչում կազմել է 3,10%, իսկ սնկերի տարբերակներում՝ 3,18-3,38%, միևնույն ժամանակ ծղոտում ազոտի կուտակումը մոտ 2,8 անգամ ավելի պակաս է եղել:

Միկորիզային սնկերի կարևորագույն ֆունկցիաներից մեկը բարձրակարգ բույսերին ֆոսֆորով մատակարարելն է, հատկապես այնպիսի հողերում, որտեղ այդ մակրոսննդատարրը գտնվում է բույսերի համար անմատչելի միացությունների ձևով: Աղյուսակ 3-ի տվյալներից երևում է, որ գարու հատիկներում ֆոսֆորի պարունակությունը տարբերակների միջակայքում տատանվել է 0,40-ից (ստուգիչ) մինչև 0,46% (*Glomus mosseae*) սահմաններում, ընդ որում սնկային խտանյութերի տարբերակներում արձանագրվել են բավականին մոտ արդյունքներ (0,43-0,46%): Գարու ծղոտում ֆոսֆորի պարունակությունը կազմել է 0,15-0,17%: Ցորենաշորայի հատիկում համեմատաբար ավելի շատ ֆոսֆոր է կուտակվում (0,44-0,53%), իսկ ծղոտում՝ ավելի քիչ (0,10-0,12%): Ազոտի և ֆոսֆորի յուրացման տեսակետից առավել արդյունավետ է եղել *Glomus mosseae* շտամի խտանյութը: Նույն օրինաչափությունը նկատվել է նաև K₂O-ի պարունակության դեպքում, որը ծղոտում զգալիորեն բարձր է:

Հետազոտությունների շրջանակներում ուսումնասիրվել է նաև մի քանի միկրոտարրերի (Fe, Zn, Mn, Cu) կլանումը գարու և ցորենաշորայի կողմից, որոնք կարևոր դեր են խաղում բույսերի նյութափոխանակային պրոցեսներում (աղյուսակ 4): Աղյուսակի տվյալներից երևում է, որ ուսումնասիրված բույսերի մոտ երկաթի կլանումն ավելի մեծ է եղել *Glomus mosseae* և *intraradices* շտամների օգտագործման դեպքում: Ցինկի պարունակությունը գարու և ցորենաշորայի հատիկներում մոտ 2,5-3 անգամ գերազանցել է ծղոտի պարունակությանը: Երկու բույսերի մոտ էլ կիրառված սնկային խտանյութերը ցինկի կլանման վրա դրական ազդեցություն են ցուցաբերել և առավել բարձր արդյունքը դարձյալ ստացվել է *Glomus mosseae* շտամի դեպքում, իսկ ինչ վերաբերում է մանգանին, ապա սնկային խտանյութերը գրեթե չեն ավելացրել դրա

Միկորիզային սնկերի տարրեր շտամների ազդեցությունը գարու և ցորենաշորթայի կենսազանգվածում հիմնական սննդատարրերի պարունակության վրա, % օդայոր զանգվածի հաշվով (3 տարվա՝ 2009-2011 թթ միջինը)

Տարրերակները	Գարի						Ցորենաշորթ					
	հատիկ			ծղոտ			հատիկ			ծղոտ		
	N	P ₂ O ₅	K ₂ O	N	P ₂ O ₅	K ₂ O	N	P ₂ O ₅	K ₂ O	N	P ₂ O ₅	K ₂ O
1. Ստան սնկերի (ստոգիչ)	3,25 a	0,40 b	0,42 a	1,27 a	0,15 c	1,95 a	3,10 b	0,44 e	0,42 b	1,10 c	0,10 c	1,94 c
2. Glomus mosseae – 10q/մ ²	3,42 a	0,46 a	0,44 a	1,35 a	0,17 a	2,06 a	3,36 ab	0,51 ab	0,46 a	1,19 ab	0,12 a	2,14 abc
3. Glomus mosseae – 20q/մ ²	3,40 a	0,46 a	0,45 a	1,35 a	0,17 a	2,09 a	3,38 a	0,53 a	0,47 a	1,20 a	0,12 a	2,16 ab
4. Glomus intraradices – 10q/մ ²	3,36 a	0,45 a	0,45 a	1,33 a	0,17 a	2,07a	3,34 ab	0,52 ab	0,47 a	1,18 ab	0,12 a	2,17 ab
5. Glomus intraradices – 20q/մ ²	3,38 a	0,45 a	0,44 a	1,34 a	0,17 a	2,04 a	3,32 ab	0,52 ab	0,47 a	1,18 ab	0,12 a	2,19 a
6. Glomus etunicatum – 10q/մ ²	3,28 a	0,44 a	0,44 a	1,31 a	0,16 ab	2,02 a	3,18 ab	0,47 d	0,44 ab	1,13 bc	0,10 c	2,05 bc
7. Glomus etunicatum – 20q/մ ²	3,23 a	0,43 ab	0,43 a	1,28 a	0,16 ab	2,01 a	3,21 ab	0,49 bcd	0,45 ab	1,14 abc	0,11 ab	2,09 abc
8. Glomus caledonium – 10q/մ ²	3,26 a	0,43 ab	0,42 a	1,29 a	0,16 ab	1,97 a	3,21 ab	0,48 cd	0,44 ab	1,14 abc	0,11 ab	2,03 bc
9. Glomus caledonium – 20q/մ ²	3,30 a	0,44 a	0,43 a	1,31 a	0,16 ab	1,99 a	3,23 ab	0,50 abc	0,46 ab	1,15 abc	0,11 ab	2,11 abc
10. Սնկերի 4 շտամների խառնուրդ – 10-ական q/մ ²	3,31 a	0,43 ab	0,44 a	1,32 a	0,16 ab	2,01 a	3,28 ab	0,51 ab	0,45 ab	1,17 abc	0,11 ab	2,07 abc
11. Սնկերի 4 շտամների խառնուրդ – 20-ական q/մ ²	3,33 a	0,44 a	0,46 a	1,32 a	0,17 a	2,12 a	3,30 ab	0,49 bcd	0,46 a	1,17 abc	0,11 ab	2,15 abc

Միկորիզային սնկերի տարրեր շտամների ազդեցությունը գարու և ցորենաշորթայի կենսազանգվածում միկրոտարրերի պարունակության վրա, մգ/կգ օդայոր զանգվածի հաշվով (3 տարվա՝ 2009-2011 թթ միջինը)

Տարրերակների համարն ըստ սխեմայի	Գարի						Ցորենաշորթ					
	Հատիկ			Ծղոտ			Հատիկ			Ծղոտ		
	Fe	Zn	Mn	Cu	Fe	Zn	Mn	Cu	Fe	Zn	Mn	Cu
1	57,6	25,4	38,7	9,7	141,8	9,3	38,1	9,4	51,5	27,6	35,9	10,0
2	72,9	29,2	37,3	12,1	187,0	10,3	36,8	11,6	70,0	32,2	35,6	11,9
3	71,5	29,5	39,5	11,5	182,9	10,4	38,7	11,2	71,4	32,8	36,5	11,8
4	68,9	28,9	39,1	10,5	177,9	10,3	38,5	10,2	68,7	32,2	36,2	12,1
5	67,9	28,8	40,7	11,5	175,8	10,5	40,0	11,0	68,7	32,5	35,3	13,2
6	60,0	27,3	38,0	10,5	156,8	9,9	37,4	10,1	57,3	29,9	36,3	11,4
7	63,1	27,3	37,6	11,8	161,8	10,0	36,9	11,5	60,5	30,3	36,9	12,4
8	59,6	26,8	36,5	10,9	153,1	9,8	35,7	10,6	58,7	30,3	37,2	11,5
9	66,1	26,5	38,5	10,9	170,9	9,6	37,7	10,4	61,6	29,9	36,5	12,5
10	64,5	28,2	37,2	11,3	166,9	10,4	36,5	10,8	66,3	31,9	37,0	12,4
11	62,7	28,3	40,0	11,5	159,5	10,2	39,2	10,9	67,4	31,6	36,7	12,8

պարունակությունը գարու և ցորենաշորայի հատիկում և ծղոտում: Պղնձի պարունակությունը ինչպես գարու և ցորենաշորայի սերմերում, այնպես էլ ծղոտում գրեթե նույնն է:

Ամփոփելով աղյուսակ 4-ի տվյալները կարելի է նշել նաև, որ միկրոտարրերի յուրացումը բարձրակարգ բույսերի կողմից տեղի է ունենում ընտրողական հատկությունների օրինաչափություններով, որը ոչ միայն տարբեր բուսատեսակների, այլ նաև հողակլիմայական տարբեր պայմաններում մեծ տատանումներ կարող են ունենալ:

Դաշտային փորձերի բերքատվության ցուցանիշների (աղյուսակ 1) և հատիկում ու ծղոտում մակրո- և միկրոսնդատարրերի պարունակության (աղյուսակ 3 և 4) երեք տարվա միջին տվյալների հիման վրա հաշվարկվել է այդ տարրերի արտադրական օտարումը գարու և ցորենաշորայի ցանքերից: Աղյուսակ 5-ի տվյալներից երևում է, որ թե՛ գարու, թե՛ ցորենաշորայի ցանքերում ազոտի օտարումը հատիկի կողմից մոտ 2 անգամ, իսկ ֆոսֆորը՝ 3 անգամ գերազանցում են ծղոտի կողմից օտարվող չափերին, մինչդեռ K_2O -ն 5-6 անգամ ավելի շատ է օտարվում ծղոտի կողմից:

